

101

ԸՇ Եւրոպայի թղթեր

Միշտ հարգու՛մ է

8-Ս

Ը-26

թ. 1897

9X0003



8-93

2-86
m

115

Handwritten signature

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ՄԻՁՑ ՅԱՂԹՈՒՄ Է

1002
4056

2

Մանկական գրադարան

Ի Բ Ե Ա Յ



6142

Дозволено Цензурою. Тифлисъ, 18 Декабр. 1897 года.

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ ՅԱՂԹՈՒՄ Է

Ա.

Քաջ ու փառաւոր էր Չիգֆրիդ իշխանը:

Թանձր անտառների մէջ բարձրացած էր նրա մեծ ամրոցը, որ շրջապատուած էր հաստ ու սլինդ պատերով, բարձր աշտարակներով: Երկաթի էին ամրոցի դռները. իսկ պատերի տակ փորուած էր երկար ու խոր փոս, որ լցուած էր ջրով: Թշնամին չէր կարող մօտենալ այդ հին ու երևելի շինութեան:

Աստուծու ամեն բարիքներով լիքն էր Չիգֆրիդ իշխանի տունը. ուրախութիւնը անպակաս էր այնտեղից: Ամեն կողմից գալիս էին քաջ մարդիկ և ամենքին իշխանը հիւրասիրում էր իւր ամրոցում: Ուրախ էր և իշխանուհի Գենովափէն, Չիգֆրիդ իշխանի ջանէլ կինը: Եւ ինչպէս չը լինէր ուրախ: Հօր ու մօր պաշտած աղջիկ էր նա, բայց Չիգֆրիդ իշխանը հօրից ու մօրից էլ աւել էր սիրում Գենովափէին: Մարդ ու կին գեղեցիկ օրեր էին անց կայնում:

Բայց վրայ հասաւ կռիւր: Անհաւատ թուրքերը եկան վրայ, և Չիգֆրիդ իշխանը գնաց նրանց դէմ կռուելու:

Գենովափէն լաց լինելով ճանտապարհ գրեց իւր ամուսնուն: Իսկ Չիգֆրիդ իշխանը ասում էր նրան.

— «Լաց մի լինիր, սիրելիս: Դու լաւ գիտես, որ ես քեզ մենակ չեմ թողնում: մեր հաւատարիմ Գօլօնը մնում է այստեղ, նա կը պաշտպանէ քեզ: Մինչև իմ գալը Գօլօնը այս ամբողջի տէրն է»:

Ու գնաց Չիգֆրիդ իշխանը: Ափսո՛ս, նա լաւ չէր ճանաչում, թէ ի՛նչպիսի մարդ է Գօլօնը: Գենօվափէն էլ չէր ճանաչում: Բայց անցաւ մի ամիս, Գօլօնը ամեն ինչ իւր ձեռքն առաւ: Նա սկսեց տանջել, չարչարել Գենօվափէին, դուրս արաւ նրա բոլոր աղախիներին, թող չէր տալիս, որ իշխանունին մի կտոր հալալ հաց ուտէ: Այդ դեռ քիչ էր. Գօլօնը ստիպեց, որ Գենօվափէն լուացք անէ, ամաններ սրբէ: Իւր տան մէջ Գենօվափէն մի գերի էր: Չը կար մէկը, որ պաշտպանէր նրան: Ամբողջում մնացած բոլոր ծառաները սաստիկ վախենում էին նոր կառավարչից: Գօլօնը չար էր և անխիղճ: Մի անգամ Գենօվափէի սարսաւոր երեխան մի կոպիտ պատասխան տուեց Գօլօնին, ու չար մարդը իսկոյն կտրել տուեց խեղճ երեխայի գլուխը. իսկ մի ուրիշ աղախնի նա փակեց մութ նկուղի մէջ:

Վախը պատեց ամենքին. ամբողջում ոչ ոք ձայն ու ծպտուն չէր հանում: Գենօվափէն ոչ ուտում էր, ոչ խմում: ման էր գալիս վախենալով, կամ թէ ամբողջ օրը թաղնում էր իւր ննջարանում և սպասում էր, թէ ե՛րբ Աստուած ողորմութիւն կանէ:

Իսկ Գօլօնը ուրիշ միտք էր անում:

— «Ինչո՞վ եմ ես պակաս Չիգֆրիդ իշխանից, — ասում էր նա ինքն իրան. — ծառաներին սրտաճաք կանեմ, ամբողջն կը տիրանամ, և թէ իշխանը կուռից ողջ վերա-

դառնայ՝ կը փակեմ դռները և կուռ կ'սկսեմ նրա դէմ»:

Բայց Գօլօնը իսկոյն չարաւ այն, ինչ մտածում էր: Դեռ սպասում էր. վախում էր ծառաներից: Ծառաները թէև ձայն չէին հանում, բայց սաստիկ ատում էին նրան, որովհետև նա անխիղճ բռնաւոր մարդ էր:

Մի օր իշխանունի Գենօվափէն ծածուկ իւր մօտ կանչեց հաւատարիմ ծառաներից մէկին, որի անունը Դրագօն էր: Ծեր էր Դրագօնը. հին ժամանակից նա ձիապան էր ամբողջում և չէր մոռացել իւր տէրերին: Գենօվափէն ասաց նրան.

— «Լսի՛ր, ծերուկ. լուսաբացին, երբ ամենքը քնած կը լինին՝ դու կը վերցնես մեր ամենալաւ ձին և դուրս կը գնաս ամբողջից»...

Ծերունին իսկոյն հասկացաւ, և կտրելով իշխանունու խօսքը՝ ասաց.

— «Հասկացա՛յ. ես ձի կը նստեմ, կը թռչեմ իշխանի մօտ և կը պատմեմ նրան ամեն ինչ: Գօլօնը խորամանկ աղուէս է, բայց նրան պէտք է լաւ պատժել»:

Չիապանը բարկութիւնից սեղմեց իւր բռունցքը. նրա ծեր աչքերի մէջ պսպղաց ատելութիւնը, կարծես նա 30 տարեկան երիտասարդ դարձաւ:

Եւ Դրագօնը գնաց ախոռը, բայց ի՛նչ տեսնէ. — խորամանկ Գօլօնը այնտեղ էր:

— «Ա՛, պտուա շուն, դու իշխանունու հետ ծածուկ բաներ ես տարքում, հա՞»...

Ասաց Գօլօնը և հրամայեց, որ ծերունուն գցեն նկուղը ու լաւ տանջեն այնտեղ:

Խեղճ Դրագօնը մեռաւ սարսափելի տանջան ջներից,

բայց բերանից մի խօսք էլ չը հանեց: Գօլօնը շատ էլ չափսոսաց, որ չը կարողացաւ խօսք քաշել ծերունուց. նա արդէն գիտէր, որ Գենօվափէն ուզում էր մարդ ուղարկել Զիգֆրիդ իշխանի մօտ, իմաց տալ նրան, թէ ի՞նչ գրութեան մէջ է ինքը:

Հիմա Գօլօնը էլ չը համբերեց, կանչեց Գենօվափէին իւր մօտ: Իշխանունին մտաւ դահլիճը: Նա գունատ էր մեռելի նման, բայց հպարտ էր, չէր վախում այդ անսիրտ մարդուց և ուղիղ նայեց նրա աչքերի մէջ:

— «Հիմա՞ ի՞նչ ես ուզում ինձանից», — ասաց նա:

— «Ի՞նչ եմ ուզում... Իմացիր որ այս օրուանից ես եմ այս ամրոցի տէրը: Քո ամուսինը այլ ևս չէ կարող մտնել այս շնաքից: Իսկ դու եթէ ուզում ես տանտիկին մնալ՝ պիտի պատկուես ինձ հետ»:

Գենօվափէն այնպէս հպարտ նայեց, որ Գօլօնը աչքերը ցած գցեց.

— «Խելքդ ո՞ւր է գնացել, ասաց Գենօվափէն հանդարտ ձայնով: — Ես մի թող կին եմ. դու կարող ես ինձ սպանել, կարող ես այս ամրոցը քո ձեռքը գցել, բայց իմ հոգին միշտ մաքուր կը մնայ»:

— «Այդպէս հա՛, — գոռաց Գօլօնը. — որ այդպէս է՝ ես քեզ կը բանտարկեմ»:

Եւ կանչեց ծառաներին: Բայց ի՞նչ ասաց նրանց:

— «Իշխանունին, — ասաց, — մտքումը գրել էր որ սպանէ մեր Զիգֆրիդ իշխանին և գրա համար ուղարկում էր Գրագօնին իշխանի մօտ. բայց ես իմացայ այս բանը: Տղերք, սրան բանտը տարէք»:

Ծառաները չը համարձակուեցան ընդդիմանալ նրա հրամանին: Գենօվափէն բանտ ընկաւ:

Ամիսներ անցան: Գետնի տակ, խոնաւ ու մութ նկուղի մէջ, տանջւում էր խեղճ իշխանունին: Նրա գոգում պառկած էր նրա մանուկը, որ նոր էր ծնուել: Մի կտոր շոր չը կար, որ ծածկէր նորամանուկին. անզգամ Գօլօնը ո՛չ անկողին էր տալիս, ոչ էլ մի քիչ յարդ, որ դոնէ յարդի վրայ պառկեն: Մայրը մանուկի թաթերն ու ոտները տաքացնում էր իւր բերանի շնչով և ինքն իրան ասում էր. «Մանուկիս անունը Խղճուկ եմ դնում: Խեղճ է սա: Արդեօք նա կը տեսնէ՞ Աստուծու լոյս աշխարհը»:

Իսկ Գօլօնը բուռական չէ դրանով. նոր չարութիւն է մտածում:

Մի ծառայ ունի նա, իւր նման չար և անաստուած մարդ: Նրա հետ Գօլօնը փակուած է աշտարակում և մի նամակ է գրում Զիգֆրիդ իշխանին: Նամակը տալիս է ծառային և սովորեցնում է, թէ այս ու այս բաները կ'ասես իշխանին:

Բ.

Մեծ կռիւը նոր է վերջացել, և Զիգֆրիդ իշխանը նրատած է վրանում իւր քաջերի հետ: Ամենքի առաջ դրած են զինով լի գաւաթները: Բայց իշխանը տխուր է, կախ է արել իւր գլուխը. նրա մտքի մէջ է իւր սիրելի, հեզ Գենօվափէի պատկերը...

Յանկարծ մտնում է դեսպանը:

— «Հգօր իշխան, — ասում է նա, չոգելով մի ծնկի վրայ, — իմ տէրը, Գօլօնը, ողջունում է ձեզ... անա և նրա նամակը»...

— «Իսկ Գենօվափէն, մի՞թէ նա ինձ մի հատ բարև էլ չը դրկեց», — գոռաց իշխանը:

Գեսպանը այնպէս ցոյց տուեց, թէ ինքը խելքը կոր-
ցրել է և լուսթեամբ տուեց նամակը:

Իշխանը արագ աչքի անց կացրեց նամակը. արիւնը
խփեց նրա գլխին, և նա այնպէս խփեց սեղանին, որ
գաւաթները թափուեցան:

— «Մա՛հ Գենովափէին», — գոչեց նա:

Գօլօնի նամակում գրուած էր, թէ Գենովափէն ամեն օր
քէֆեր է սարքում, մոռացել է իւր ամուսնուն և ուզում է
նոյն իսկ սպանել իւր նորածին երեխային...

— «Բայց գուցէ սուտ է ասում քո տէրը», — այսպէս
խօսեց իշխանը՝ երբ հանգստացաւ, խելքը գլուխը հաւա-
քեց: — «Հապա դու ինքդ պատմիր, թէ ինչ կայ ինչ չը
կայ մեր ամրոցում»:

Գեսպանը շատ լաւ էր իւր մտքում պահել Գօլօնի
խրատները. նամակի մէջ գրուած սուտը նա էլ կրկնեց իւր
բերանով:

— «Որ այդպէս է՝ թող մեռնի նա, — գողաց իշխանը
աւելի խիստ ձայնով: — Եւ այսուհետև ոչ ոք չը համար-
ձակուի լիչեցնել ինձ որ ես կին ունէի»...

Նա ինքը գրեց մահուան վճիռը և ուղարկեց Գօլօնին:

Գ.

Գօլօնը ուրախութիւնից պար գալ է ուզում: Իշխանի
թուղթը իւր ձեռքումն է. հիմա նա ցոյց կը տայ, թէ ո՛վ
է ինքը:

Հաւաքեց բոլոր ծառաներին, կանչել տուեց մօտիկ
գիւղացիներին և ամենքի առաջ կարդաց իշխանի հրա-
մանը: Սպանել Գենովափէին...



Երկու դահիճ բռնեցին Գենովափէին և երեխայի հետ տարան անտառը: Մէկը հանեց իւր սուրը և ասաց.

— «Դէ՛հ, իշխանունի, հիմա քո վերջն է»...

Գենովափէն ծունկ չոգեց դահիճների առաջ և սկսեց աղաչել.

— «Խնայեցէք ինձ. Աստուած արդար է, գիտէ որ իմ հոգին մաքուր է... Նա չի թող տայ, որ այսպիսի չար գործ կատարուի: Խմ երեխային մի՛ սպանէք. Աստուած փոխարէնը կը տայ ձեզ»:

Դահիճը սուրը լետ քաշեց. իսկ նրա ընկերն ասաց.

— «Գիտե՞ս ինչ կայ. մեր ձեռները չարիւնտանք: Աւելի լաւ է, տանենք սրան ծմակի խորքը և թողնենք այնտեղ: Միւսնոյն է, ծմակի մէջ էլ սրանք կը մեռնեն. հօ այնտեղ չեն սպրելու»:

Աչդպէս էլ արին դահիճները:

Խիտ անտառում թափառում է իշխանունին: Գայլերն ու արջերը վազվզում են նրա շուրջը. աղուէսները նրան մտիկ են տալիս. ագուաւներն ու անգղները պտույտ են գալիս նրա գլխի վերև... Վախում է իշխանունին... Բայց կամաց կամաց նա սովորեց անտառին. գտաւ մի քարայր, մամուռից անկողին շինեց իւր և երեխայի համար: Իսկ գաղանների հետ մինչև անգամ բարեկամացաւ: Մի մեանցից չէին քաշում: Թռչունները, սկիւռները, նապաստակները ուստոստում էին նրա շուրջը և խաղում էին խղճուկի հետ:

Ծառերի պտուղները և բոյսերի արմատներն էին Գենովափէի կերակուրը: Բայց գոհ էր և դրանով:

Շուտով ցուրտը վրայ հասաւ. ձիւնախառն քամին

սկսեց. ծառերի տերևները թափուեցան. քարայրի մէջ
խոնաւ էր. առաւօտները քարայրի պատերը ծածկուում
էին բարակ սառուցով: Ի՛նչպէս էր մրսում, ի՛նչպէս էր
տանջւում Գենովափէն: Բայց նա իւր մասին չէր մտածում.
բաւական էր, որ Խղճուկը չը մրսէր: Մայրը ամբողջ օր
տաքացնում է երեխային իւր կրծքի վրայ. իսկ չար քա-
մին քիչ է մնում պոկէ նրա մազերը, սառցնում է: Խեղճ
մայրը հաւաքում է չոր տերևներ, մամուռ, ծառի ճիւղեր,
ծածկում է քարայրի բերանը, փաթաթում է երեխային,
մի կերպ պահպանում է, իսկ ինքը նստում է նրա կող-
քին. ինքը տկոր է և դողում է:

Բայց ամենից դժուարը ուտելու բան գտնելն է: Գե-
նովափէն մատներով քանդում է ձիւնը, որ արմատներ
գտնէ. սառուցները ճանկուտում են նրա ձեռները, արիւ-
նոտ են անում: Իսկ երեխան օր օրի վրայ նուազում
է. մօր ծծերի մէջ կաթ չը կայ, որ նա ուտէ: Խղճուկի
դէմքը գունատուել է, ոտներն ու ձեռները չորացել են:

— «Տէ՛ր Աստուած, դու պահիր իմ երեխան, իմ աչքի
լույսը... Ուղարկիր գարունը, մի թողներ որ մենք մեռնենք»...

Այսպէս է աղօթում Գենովափէն: Եւ նրա աղաչանքը
լսեց Աստուած: Հարաւից տաք քամի փչեց, սիրուն արևը
դուրս եկաւ, կանաչ խոտը բացուեց:

Մի օր մի մեծ եղնիկ գլուխը քարայրի մէջ մտցրեց:
Գենովափէն շուքեց նրան և ներս տարաւ: Եղնիկի ծծերը
լիքն էին կաթով: Խեղճը մենակ էր մնացել. գալերը կե-
րել էին նրա ձագերին: Եղնիկը խեղճ-խեղճ նայեց Գե-
նովափէին, պառկեց նրա մօտ... Գենովափէն կթեց նրան.
պմանը ծառի կեղևի մի կտոր էր. երկու — երեք անգամ



21



լցրեց ամանը կաթով, տուեց խղճուկին, ինքն էլ խմեց:

Դրանից չետոյ եղնիկը դարձաւ երեխայի ծծմալը. նա ապրում էր մօր ու երեխայի հետ միասին և չէր հեռանում իւր նոր բարեկամներից: Երբ գնում էր խոտ արածելու՝ հեռուից բառաչում էր, կանչում էր խղճուկին:

Իշխանունին մի օր անտառում մի մեռած այծեամնիկ գտաւ: Քերթեց նրա կույին և խղճուկի համար մորթէ շապիկներ ու մորթէ կօշիկներ կարեց:

Պատահում էր շատ անգամ, խղճուկը ինդրում էր մօրից որ իրան նստացնէ եղնիկի մէջքին: Մայրը նրատացնում էր, խիսկ եղնիկը հանդարտ արածում էր. վայրի աղաւնիները, թիթեռնիկները գալիս թռթռում նրանց շուրջը:

Խղճուկը կարճ միջոցում մի չաղ ու առողջ երեխայ դարձաւ: Նա վազում էր իւր ծծմալը եղնիկի ետեւից, հասնում էր ամեն տեղ. արդէն նա ձանաչում էր ծրմակի բոլոր նապաստակներին, սկիւռներին և աղաւնիներին: Երբեմն խղճուկը նստում էր ծառի տակ. մեծ եղնիկը նայում էր նրան իւր բարի աչքերով. գալիս էին և ուրիշ փոքրիկ եղնիկներ, կանգնում էին նրա մօտ, լիզում էին նրա ձեռքերը. ծառի ճիւղի վրայ փոքրիկ սկիւռը ընկող էր կրծում, իսկ աղաւնին բերում էր խղճուկի համար նոր հասած կեռաս, որ նա ուտէ:

Եւ խղճուկը շատ երջանիկ է. նա խալի չէ էլ մտածում, թէ կարելի է ուրիշ կերպ ապրել: Մի—մի նա ասում է իր մօրը.

— «Մայրիկ, ինչո՞ւ ես լաց լինում. մի՞թէ գու ուրախ չես, մայրիկ... Տես ի՞նչ լաւ տեղ է մեր անտառը»:

Գենովափէն ծիծաղում է արտասուքներ թափելով,
համբուրում է իւր սիրուն երեխային և չէ կշտանում նրանից:

Գ.

Իսկ ամրոցում մեծ փոփոխութիւններ եղան:

Հանգիստ չէր Ձիգֆրիդ իշխանի սիրտը: Հաւաքելով իւր մարդկանց՝ իշխանը տուն վերադարձաւ: Մօտենում է իւր ամրոցին, և ի՛նչ տեսնէ. դռները պինդ փակուած են, կամուրջները քանդուած:

— Այս ի՛նչ բան է, — ասում է Ձիգֆրիդ իշխանը. — հօ օտար երկրից օտար իշխան չէ եկել և տիրապետել իմ ամրոցին:

Նա մարդ ուղարկեց մօտիկ գիւղը, որ իմանայ թէ ի՛նչ է պատահել:

Չարմանալի լուրեր բերեց ուղարկած մարդը: Գօլօնը հաւատարիմ մարդ չէ, այլ դաւաճան. նա հիմա նստել է ամրոցում, իրան իշխան է անուանում. հրամայել է պինդ փակել դռները և ասել է, որ երբ Ձիգֆրիդ իշխանը գալ՝ կռիւ սկսեն նրա դէմ:

Ձիգֆրիդը մտածմունքի մէջ ընկաւ. իսկ նրա առաջ մի գիւղացի աղջիկ է գալիս և ուզում է նրան մի բան հասկացնել: Վերջապէս աղջիկը տանում է իշխանին մի կողմ և պատմում է սարսափելի բաներ:

— Ինձ չը սպանես, իշխան, — աղաչում է աղջիկը. — դու հրամայել ես, որ ոչ ոք չը տայ իշխանուհու անունը, բայց ես չեմ կարող լուռ մնալ: Երբ իշխանուհուն տանում էին ծմակը որ աջնտեղ սպանեն՝ նա ինձ տուեց այս փոքրիկ նամակը, հրամայեց որ քեզ հասցնեմ...

Խեղճը շատ էր տանջուած, չար Գօլօնը նրան պահել էր բանտի մէջ»:

Ձիգֆրիդ իշխանը կարդում է աղջկայ տուած նամակը և չէ հաւատում իւր աչքերին: Ինչե՛ր են գրուած, տէ՛ր Աստուած: Անխիղճ Գօլօնի բոլոր արարքները հիմա պարզ երևում են: Ձիգֆրիդը ծեծեց իւր գլուխը և խելագարի նման վազեց իւր մարդկանց մօտ:

— «Չիաները թամբեցէ՛ք. լարձակուեցէ՛ք ամրոցի վրայ և քանդեցէ՛ք, ոչնչացրէ՛ք, եթէ անձնատուր չի լինի»:

Այսպէս է գոռում քաջ Ձիգֆրիդը:

Նրա քաջ զինուորները արծիւների նման թռան դէպի ամրոցը: Սար ու ձոր դղրդաց, գետինը դողաց. հին ամրոցը, որ հսկալի նման բարձրացած էր ծմակների մէջ՝ չը դիմացաւ: Դռները ճրթճրթացին, ժանգոտած երկաթները կոտրատուեցան, պատերը ցնցուեցան: Քաջ Ձիգֆրիդ իշխանը էլի իւր հայրական տանն էր...

Բայց նա ուրախ չէ, նրա սիրտը եռ է գալիս, խորովում է:

— «Ո՛ւր է դաւաճանը, գտնել նրան կենդանի թէ մեռած»...

Իէս ու դէն ցրուեցան ծառաները, երկու օր պրտաւում են, երրորդ օրը գտան ծմակում: Գօլօնը փախել էր՝ բայց մահից չէր ազատուել: Հիմա ընկած էր մի խոր փոսի մէջ, նա արիւնաթաթախ էր, ջարդուած. ագռաւները կերել էին նրա դիակի կէսը:

Տխուր ու տրտում է Ձիգֆրիդ իշխանը: Քաջ ընկերները հեռացան, գնացին իրանց տները լռեցին, ամրոցը թաղուեց տխրութեան մէջ: Իսկ Ձիգֆրիդ իշխանը

Թափառում է դատարկ սենեակներում և ինքն իրան ա-
սում է. «Ես մարդասպան եմ, ես կորցրի երկու անմեղ
հոգիներ. ինձ համար հանգստութիւն չը կայ և չը պիտի
լինի»:

Ե.

Անցաւ վեց տարի:

Մի անգամ Ջիզֆրիդ իշխանի հին ընկերները հիւր
եկան ամրոցը: Ճար չը կար, պէտք էր նրանց համար որս
սարքել: Որսորդները ցրուեցան անտառում: Եները հա-
ջեցին, որսորդի փողը փչեց, ձիանքը խրխնջացին, մարդ-
կանց ազազակները դղրգացրին թանձր ծմակը: Բոլոր
անասունները, մեծ թէ փոքր գազանները դէս ու դէն
փախան. վաղուց նրանք այդպիսի բան չէին տեսել: Շատ
արջեր ու գայլեր սպանուեցան, շատ եղջերուներ, աղուէս-
ներ ու նապատակներ ընկան որսորդների նետերից...

Ջիզֆրիդ իշխանը տաքացել էր, նա առաջ ընկաւ,
գնաց ծմակի՝ ամենախոր տեղը և յանկարծ տեսաւ, որ
մի սիրուն եղնիկ փախչում է իւր առջևից:

Իշխանը իջաւ ձիուց և վազեց եղնիկի ետևից. ե-
ղնիկն էլ վազեց: Իշխանը հրացան արձակեց, բայց գրն-
գակը չը գիպաւ: Եղնիկը վազեց թփերի միջով և քա-
ջեց սուրճի իշխանին իւր ետևից: Մի խաչ տեղ մտաւ նա:

Ջիզֆրիդը լիտ տարաւ թփի ձիւղերը, և մնաց ապ-
չած. նրա առաջ քարայր էր, իսկ քարայրի մօտ երևում
էր եօթը տարեկան մի երեխայ. եղնիկը երեխայի մօտ
էր, իսկ երեխան գրկել էր նրա վիզը իւր հաստիկ թա-
թերով:

Իշխանը մօտեցաւ: Եղնիկը և երեխան փախան, մտան



Թփերի մէջ, իսկ քարայրից դուրս եկաւ մի կին: Ի՞նչ է դա: Ջիզֆրիդը քարացաւ... Նրա սուտը կանգնած էր մի ուրուական. խեղճը չէր հաւատում, թէ դա Գենովափէն է. նրան այնպէս էր թւում, թէ Գենովափէի հոգին է քարայրում ապրում:—

Թշուա՛ւ իշխան... Նրա մազերը բիզ-բիզ կանգնեցին, և ծունկ չոգելով՝ նա աղաղակեց.

— «Ո՛վ անմարմին հոգի, ինչո՞ւ դուրս եկար գերեզմանից, ինչո՞ւ ես չարչարում իմ ցաւազար սիրտը: Առանց այդ էլ ես հանգստութիւն չեմ գտնում. գիտեմ որ ես մարդասպան եմ և անէժ.ք կալ ինձ վրայ»...

Այն ժամանակ Գենովափէն պատասխանեց.

— «Ուշքի եկ, Ջիզֆրիդ, իմ սիրելի, իմ քաղցրիկ ամուսին. ես հոգի չեմ, ուրուական չեմ, ես քո կինն եմ: Ես և քո որդին ողջ և առողջ ենք»:

Այսպէս հանգստացնելով իւր ամուսնուն՝ Գենովափէն կանչեց երեխային:

— «Խղճուկ, արի՛ ալստեղ: Սա քո հայրն է, Խղճուկ...

Երեխան վախենալով մօտեցաւ, և այդ ժամանակ Ջիզֆրիդը ուշքի եկաւ: Այո՛, սա իւր երեխան է, իւր սիրելի որդին, որ բոլորովին նման է իրան: Երկուսն էլ մայրն ու երեխան, կենդանի են, սիրելի:

Մի՞թէ պէտք է պատմել, թէ ինչ խնճույք սարքեց Ջիզֆրիդ իշխանը:

Գենովափէին և երեխային հազցրին ամենալաւ շորեր և տարան ծմակից ամրոցը. Ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ պատիւներ... Թագաւորի որդիներին էլ այդպիսի հանդէսով չէին տանի: Երեխաները, կանայք, ծիրերը,

պառաւ կանաչք հաւաքուել էին Գենովափէի մօտ, ուզում էին դոնէ նրա շորերին դիպչել:

— «Սրբունի՛, հրեշտակ», — կանչում էին ամեն կողմից:

Եւ ճշմարիտ, Գենովափէն իւր բերանի հրաշալի մաքուր ժպիտով նման էր հրեշտակի, իսկ Խղճուկը ծընուելու օրից էր նման փոքրիկ հրեշտակի: Մարդ չը կար, որ չը հիանար այդ երկուսին տեսնելով. բայց ամենից երջանիկը, իհարկէ, Չիգֆրիդն էր, ազնիւ իշխանը: Եզնիկն էլ չը մնաց անտառում. նա վազում էր Գենովափէի ձիու առաջ և երբեմն նայում էր իւր սիրելի սանին:

Խաղաղութիւն և հանգստութիւն տիրեց ամրոցում: Գենովափէն բարի հրեշտակի նման ամենքին օգնում էր, մխիթարում: Շրջակայքում ամենքը սիրում էին նրան և աղօթում էին նրա համար:

Իսկ Խղճուկը: — Այս անունը մնաց նրա վրայ. բայց նա բախտաւոր էր. մեծացաւ, խելօք և բարի իշխան դարձաւ:

Ընտանիքը խոր ծերութեան հասաւ: Գենովափէն տեսաւ իւր թոռներին և ծոռներին:

Գենովափէն, խղճուկ



0004099

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004099

